ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
18.04.2025 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՈՒՆՔ 5165» ՖՐԱՆՍԱՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
հասարակական կազմակերպության 2024 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԲԱՐՁՈՒՆՔ 5165» ՖՐԱՆՍԱՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
1.2 ՀՎՀՀ-ն		02527787
1.3 Գտնվելու վայրը		ԱՐՄԱՎԻՐ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ԱՐՄԱՎԻՐ ԱՌԱՐԱՏՅԱՆ 13
1.4 Պետական գրանցման համարը		211.171.03435
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		1996-12-20
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)77400920
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		eliaavoyan@rambler.ru
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ՀՈՎՍԵՓ	ՀՈՎՍԵՓՅԱՆ	նախագահ

3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը

Կազմակերպության գործունեության առարկան ու նպատակներն են՝ օրենքով սահմանված կարգով. նպաստել Հայաստանի Հանրապետությունում սոցիալական լարվածության թուլացմանն ու աղքատության վերացմանն ուղղված ծրագրերին, իրականացնել բնակչության սոցիալապես անապահով խավի սոցիալական և առողջապահական պաշտպանվածությանն ուղղված մարդասիրական և բարեգործական գործունեություն. կազմակերպել և իրականացնել սոցիալական, կրթական, առողջապահական և կանխարգելման տարաբնույթ ծրագրեր.

աջակցել սոցիալական բարեփոխումների իրականացմանն ուղղված օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակմանը, սոցիալական ծրագրերի իրականացմանը և նոր սոցիալական տեխնոլոգիաների ներդրմանը, սոցիալական ոլորտի գիտական, կադրային ներուժի վերապատրաստմանը. միավորել մասնագետների, շահագրգիռ անձանց և կազմակերպությունների ջանքերը արցախյան պատերազմներում զոհված, անհետ կորած անձանց ընտանիքներին, 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ անձանց և սոցիալապես անապահով խավերին բժշկական օգնություն ցուցաբերելու համար,

աջակցել զոհված և անհետ կորած անձանց ընտանիքների, սոցիալապես անապահով խավերի հարցերով զբաղվող կազմակերպություններին և ցույց տալ նրանց անհրաժեշտ օգնություն, պետական և այլ մարմինների ու կազմակերպությունների հետ համատեղ մասնակցել արցախյան պատերազմում անհետ կորած անձանց հայտնաբերման, նրանց նկատմամբ հսկողության կազմակերպման աշխատանքներին, ստեղծել անհետ կորած անձանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվական բանկ,

միավորել բոլոր շահագրգիռ անձանց և կազմակերպությունների ջանքերն ու հնարավորությունները, մշակելու անվճար բժշկական օգնության ծրագրեր և ստեղծել միասնական գործող համակարգ՝ հանրապետությունում արդյունավետ ձևով իրականացնելու բժշկական օգնությունը արցախյան պատերազմներում զոհված և անհետ կորած անձանց ընտանիքներին, 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ անձանց և սոցիալապես անապահով խավերին,

համագործակցել պետական մարմինների, հասարակական և այլ կազմակերպությունների հետ, բարեգործական, մարդասիրական նպատակներով ներմուծել տարաբնույթ բեռներ, պատրաստի դեղորայք և իրականացնել դրա բաշխումը, աջակցել բժշկական և այլ սոցիալական բնույթի անվճար ծառայությունների մատուցմանը արցախյան պատերազմներում զոհված, անհետ կորած անձանց ընտանիքներին, 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ անձանց, Արցախից տարհանված ընտանիքներին և սոցիալապես անապահով խավերին

նպաստել Հայաստանի Հանրապետության որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության կայացմանն ու զարգացմանը, իր կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացման համար ստեղծել աշխատանքնային խմբեր և հանձնաժողովներ,/ աջակցել խոցելի խմբին անվճար հիմնական բժշկական ծառայություններ և օգնություն, մասնագիտական կրթություն ստանալու համար, իրականացնել բուժման ծրագրեր, խթանել հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին

նպաստել խոցելի խմբի սոցիալական խնդիրների լուծմանը, ներկայացնել և պաշտպանել երիտասարդության և սոցիալապես անապահով խավերի իրավունքները, շահերը և պահանջները Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմիններում և հետամուտ լինել դրանց բավարարմանը. կազմակերպել սոցիալական երկխոսություն սոցիալական տարբեր և հատկապես խոցելի խմբերի և սոցիալական ոլորտի հասարակական կազմակերպությունների միջև աջակցել դրա կայացման գործընթացին,

մշակել բռնի տեղահանվածների, միգրանտների, հաշմանդամների, սոցիալական ռիսկի երեխաների, տարեցների և սոցիալական այլ անապահով խմբերի սոցիալական աջակցության ծրագրեր և նպաստել դրանց իրականացմանը, աջակցել սոցիալական ոլորտում բարեփոխումների իրականացմանը, համապատասխան մասնագետների պատրաստմանը, գիտամեթոդական և գիտագործնական նյութերի մշակմանը, տեխնիկական կառավարման իրականացմանը,

կազմակերպել գիտական հետազոտություններ, անցկացնել գիտաժողովներ, սեմինարներ, հանդիպումներ կազմակերպության համար արդիական և հնարավոր հարցերի շուրջ, գործուն աջակցություն ցույց տալ ՀՀ կառավարությանը և այլ պետական մարմիններին զբաղվածության ակտիվ քաղաքականության մշակման ու իրականացման աշխատանքներում,

Digitally signed by MELIKYAN LUSINE 5608730165
Date: 2025.04.18 11:45:34 AMT

կազմակերպել բարեգործական, առողջապահական, սոցիալական և կրթական միջոցառումներ, նրանցից ստացված միջոցները տրամադրել դպրոցներին, մանկատներին, առողջապահական հիմնարկներին, ծերանոցներին, սոցիալական հետազոտական ծրագրերին, ցուցաբերել խորհրդատվական և այլ աջակցություն սոցիալական խնդիրների լուծմանն աջակցող միավորումներին, ինչպես նաև անհատ քաղաքացիների նախաձեռնություններին,
իրականացնել իրավաբանական, սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն, ուսուցման նպատակային մեթոդներով նպաստել քաղաքացիների հոգեբանական անկախացմանն ու ինքնուրույն աշխատանքային և այլ հանրօգուտ գործունեության ծավալման ակտիվացմանը, հաստատել և ամրապնդել գիտաստեղծագործական և այլ բնույթի կապեր տեղի և արտասահմանյան նմանատիպ սոցիալական խնդիրներով զբաղվող կազմակերպությունների հետ Կազմակերպության գործունեությունը առավել արդյունավետ դարձնելու համար,
միավորել իր անդամների ուժերը երիտասարդության, ինչպես նաև սոցիալական անապահով և խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության, ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության կայացման գործում, սերտորեն համագործակցել հասարակական այլ կազմակերպությունների հետ՝ տեղեկատվության, փորձի փոխանակման, համատեղ ծրագրեր իրականացնելու համար,
Կազմակերպության հնարավորության շրջանակներում ստեղծել իրավակրթական, քաղաքացիներին և հատկապես խոցելի շերտերին իրենց քաղաքացիական իրավունքների լուսաբանման ու պաշտպանության կենտրոններ, մշակել և իրականացնել տարաբնույթ կանխարգելման ծրագրեր: Կազմակերպությունը կարող է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ չարգելված նաև այլ ծրագրեր:

4 Հասարակական կազմակերպության՝

4.1 Անդամների թիվը	8
4.2 Կամավորների թիվը	9
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը	1

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	<<Անվճար ստոմատոլոգիական և լոգոպեդի ծառայությունների մատուցում>>Ծրագրի շահառուներն են Արմավիրի մարզի սոցիալապես անապահով ընտանիքները, 1,2,3 կարգերի հաշմանդամները, զոհված, անհետ կորած քաղաքացիների ընտանիքները, Արցախից բռնի տեղահանված ընտանիքները:	ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Արարատյան 13	Խոցելի խավերի առողջապահության մակարդակի բարելավում:	Ընթացքի մեջ
2	<<Բերանի խոռոչի հիվանդությունների կանխարգելումն ու ատամների խնամքը վաղ տարիքից>>կանխարգելման ուսուցողական արշավ: Արմավիրի մարզի համայնքների դպրոցներում, նախակրթարաններում, մանկապարտեզներում, ամառային ճամբարներում: Ծրագրի շահառո ւերեխաները նաև նվերեն ստանում բ/խ հիգիենայի պարագաներ:	ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Արարատյան 13	Նպաստել բ/խ հիգիենայի և ատ. խնամքի պրակտիկայի և իրազեկվածության բարձրացմանը վաղ մանկ. տարիքից: Ամրապնդել կանխարգելիչ ստոմատ. Ինտերակտիվ դասախոսությունների միջոցով մարզի գյուղ.և քաղ. համայնքներում	Ընթացքի մեջ
3	<<Աջակցություն 44 օրյա պատերազմի հետևանքով տուժված անձանց:>>Ծրագրի շրջանակներում կազմակերպությունը ստոմատոլոգիական օգնություն է տրամադրումշահառուներին	ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Արարատյան 13, ՀՀԳեղարքունիքի մարզ, ք.Վարդենիս Կամոի 5 փողոց	Աջակցություն 44 օրյա պատերազմի հետևանքով տուժված անձանց: Արցախում և Հայաստանում:	Ընթացքի մեջ
4	<<Աջակցություն 2022թ. սեպտեմբերի 13-ին սանձազերծված ագրեսիայի հետևանքով տուժված, /զոհված/ անձանց ընտանիքներին:>>Ծրագրի շրջանակներում կազմակերպությունը առողջապահական և սոցիալական օգնություն է տրամադրում շահառուներին:	ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Արարատյան 13, ՀՀԳեղարքունիքի մարզ, ք.Վարդենիս Կամոի 5 փողոց	Աջակցություն 2022թ. սեպտեմբերի 13-ին սանձազերծված ագրեսիայի հետևանքով տուժված, /զոհված/ անձանց ընտանիքներին:	Ընթացքի մեջ
5	<<Ամանորյա ծրագիր սահմանի երեխաների համար>> Ծրագրի շահառուներն են Վարդենիսի տարածաշրջանի շուրջ 1500 երեխաները:	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք	1500 երեխաների համար Ամանորյա տոնական նվերների բաշխում:	Ավարտված
6	<<Աջակցություն Արցախում զոհվածների 150 ընտանիքներին>> Ծրագրի շահառուներն են զոհվածների ընտանիքները	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք: ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Արարատյան 13	Սննդամթերքով լի տոնական արկղերի բաշխում 150 ընտանիքի	Ավարտված
7	<<Ամանորյա ծրագիր երեխաների համար>>Ծրագրի շահառուներն են Էջմիածնի տարածաշրջանում հաստատված արցախցի ընտանիքների երեխաները:	ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին	175 երեխաների համար տոնական ներկայացման կազմակերպում և Ամանորյա նվերների բաշխում:	Ավարտված

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1					

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	44,042,200
8.2 Գույքը	
Ընդամենը	44,042,200

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	250,000	ՀՀ ԱՍՀՆ Սոց ապահով պետ ծառայ գործազ զբաղված 01-383-2023 պայմանագիր
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	250,000	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	45,791,382
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		45,791,382

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	250,000
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		250,000

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1	0	0	0
Ընդամենը		0	

Նշումներ

<<Բարձունք 5165>> ֆրանսահայ բարեգործական կազմակերպությունը, միավորելով սփյուռքում և Հայաստանում գործող այլ կազմակերպությունների և պետական կառույցների ներուժը, տասնամյակներ շարունակ իրականացրել և իրականացնում է տարաբնույթ բարեգործական ծրագրեր ի բարօրություն Արցախում և Հայաստանում ապրող ժողովրդի:

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____0_____ էջից

էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն